Ի. ՍՏԱԼԻՆ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՐԵՔ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱՏ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1939

ԳՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԱԿ

9447

355(47)
31 JAN 2018

Ի. ՍՏԱԼԻՆ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՅԵՐԵՔ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՃԱՌ ՄՈՍԿՎԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ՝ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՏԱՍԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

(Հրապարակված է «Պրավդա»-յում 1928 թվականի փետրվարի 28-ին)

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1939

И. СТАЛИН

О ТРЕХ ОСОБЕННОСТЯХ КРАСНОЙ АРМИИ

Госиздат — Издательство полит. литературы

Москва, 1939

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱԴԱՐԱՆ

II-28587 ԳՎ

Ընկերներ, թույլ տվեք մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի անունից վողջունել մեր Կարմիր Բանակի մարտիկներին, մեր Կարմիր նավատորմի մարտիկներին, մեր Կարմիր ավիացիայի մարտիկներին, վերջապես, մեր նախակոչիկներին, ԽՍՀՄ դինված բանվորներին։

Կուսակցությունը հպարտանում է, որ իրեն հաջողվեց բանվորների ու գյուղացիների ոգնությամբ ստեղծել աշխարհում առաջին Կարմիր Բանակը, որը մեծագույն մարտերում պաշտպանել ու պաշտպանում է բանվորների ու գյուղացիների ազատությունը։

Կուսակցությունը հպարտանում է, որ Կարմիր Բանակին հաջողվեց պատվով անցնել մեր յերկրի բանվոր դասակարգի ու գյուղացիության ներքին ու արտաքին թշնամիների դեմ մղած դաժանագույն մարտերի ծանր ուղին, որ նրան հաջողվեց ձևավորվել որպես մեծագույն մարտական հեղափոխական ուժ՝ ի սարսափ բանվոր դասակարգի թշնամիների, հուրախություն բոլոր ճնշվածների ու ստրկացվածների։

Կուսակցությունը հպարտանում է, որ Կարմիր Բանակը՝ անցնելով բանվորներին ու գյուղացիներին կալվածատերերի ու կապիտալիստների լծից ազատագրելու յերկար ուղին, իրեն համար, վերջապես, իրա-

վունք նվաճեց տոնելու իր հոբելյանը, իր ծննդյան տասերորդ տարում։

Ընկերներ, ինչի՞ մեջ է մեր Կարմիր Բանակի ուժը, վո՞րտեղ է նրա ուժի աղբյուրը։ Ինչի՞ մեջ են կայանում այն առանձնահատկությունները, վորոնք արմատական կերպով տարբերում են մեր Կարմիր Բանակը աշխարհում յերբևիցե գոյություն ունեցած բոլոր և ամեն տեսակի բանակներից։ Ինչի՞ մեջ են այն առանձնահատկությունները, վորոնք կազմում են մեր Կարմիր Բանակի ուժի ու հզորության աղբյուրը։

Մեր Կարմիր Բանակի առաջին և հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, վոր նա ազատագրված բանվորների ու գյուղացիների բանակն է, նա Հոկտեմբերյան հեղափոխության բանակն է, պրոլետարիատի դիկտատուրայի բանակը։ Մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր բանակները, ինչ կազմ ել վոր նրանք ունենան, հանդիսանում են կապիտալի իշխանությունն ամրապնդող բանակներ։ Նրանք յեղել և մնացել են կապիտալի տիրապետության բանակներ։ Բոլոր յերկրների բուրժուաները ասում են, յերբ ասում են, թե բանակը քաղաքականապես չեզոք է։ Ճիշտ չէ սա։ Բուրժուական պետություններում բանակը զրկված է քաղաքական իրավունքներից, նա հեռացված է քաղաքական արենայից, սա ճիշտ է։ Սակայն սա ամենևին չի նշանակում, թե նա չեզոք է քաղաքականապես։ Ընդհակառակը, միշտ և ամենուրեք, կապիտալիստական բոլոր յերկրներում բանակը ներգրավվել ու ներգրավվում է քաղաքական պայքարի մեջ, ծառայելով վորպես բանվորներին ճնշելու գործիք։ Մի՞թե սա ճիշտ չէ, վոր բանակն այնտեղ ճնշում է բանվորներին, վոր նա այնտեղ տերերին պատվար և ծառայում։ Ի տարբերություն այդպիսի բանակներից, մեր Կարմիր Բանակն այն առանձնահատկությունն ունի, վոր նա հանդիսանում է բանվորների ու գյուղացիների իշխանությունն ամրապնդելու գործիք, պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու գործիք, կալվածատերերի ու կապիտալիստների լծից բանվորներին ու գյուղացիներին ազատագրելու գործիք։ Մեր բանակը աշխատավորների ազատագրման բանակ է։

Արդյոք ուշադրություն դարձրել եք դուք, ընկերներ, վոր հին ժամանակ, և հենց հիմա ել կապիտալիստական յերկրներում ժողովուրդը վախենում եր և շարունակում է վախենալ բանակից, վոր ժողովրդի ու բանակի միջև գոյություն ունի անջրպետ, վորը բանակը բաժանում է ժողովրդից։ Ե՛, իսկ մեզնում։ Մեզնում, ընդհակառակը, ժողովուրդն ու բանակը կազմում են մի ամբողջություն, մի ընտանիք։ Աշխարհում վոչ մի տեղ չկա ժողովրդի կողմից դեպի բանակը ցուցաբերվող այնպիսի սիրալիր ու հոգատար վերաբերմունք, ինչպես մեզնում։ Մեզնում բանակը սիրում են, նրան հարգում են, նրա մասին հոգ են տանում։ Ինչու՞։ Վորովհետև բանվորներն ու գյուղացիներն աշխարհում առաջին անգամն են ստեղծել իրենց սեփական բանակը, վորը ծառայում է վոչ թե տերերին, այլ նախկին ստրուկներին, ներկայումս ազատագրված բանվորներին ու գյուղացիներին։

Ահա թե վորտեղ է մեր Կարմիր Բանակի ուժի աղբյուրը։

Իսկ ի՞նչ է նշանակում ժողովրդի սերը դեպի իր բանակը։ Այդ նշանակում է, որ այդպիսի բանակը կունենա ամենաամուր թիկունք, որ այդպիսի բանակն անհաղթելի չե հանդիսանում։ Ի՞նչ բան է առանց ամուր թիկունքի բանակը։ Վոչինչ։ Ամենամեծ բանակները՝ ամենալավ զինված բանակները, առանց ամուր թիկունքի, առանց թիկունքի կողմից, աշխատավոր բնակչության կողմից ցուցաբերվող ոգնության ու համակրանքի, քայքայվում ու փոշիանում եյին։ Մեր բանակն աշխարհում միակն է, որը բանվորների ու գյուղացիների կողմից համակրանք ու ոգնություն է վայելում։ Սրա մեջ է նրա ուժը, սրա մեջ է նրա ամրությունը։

Ահա թե, ամենից առաջ, ինչով է մեր Կարմիր Բանակը տարբերվում աշխարհում գոյություն ունեցած և գոյություն ունեցող մյուս բոլոր տեսակի բանակներից։

Կուսակցության ցանկությունները, նրա խնդիրը կայանում է նրանում, որ Կարմիր Բանակի այս առանձնահատկությունը, բանվորների ու գյուղացիների հետ ունեցած նրա այս մոտիկությունը, նրա յեղբայրական կապը պահպանվի ու ամրապնդվի մեր Կարմիր Բանակի համար։

Մեր Կարմիր Բանակի յերկրորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նա, մեր բանակը, հանդիսանում է որպես մեր յերկրի ժողովուրդների միջև յեղող յեղբայրության բանակ, որպես մեր յերկրի ճնշված ժողովուրդների ազատագրման բանակ, որպես մեր յերկրի ժողովուրդների

ազատության ու անկախության պաշտպանության բանակ։ Հին ժամանակ բանակները սովորաբար դասակարգվում եյին շովինիզմի վոգով, զավթողականության վոգով, ոտար ժողովուրդներ հնազանդեցնելու անհրաժեշտության վոգով։ Հենց սրանով է իսկապես բացատրվում, որ հին տիպի բանակները, կապիտալիստական բանակները դրանով մեկտեղ նաև գաղութային բանակներ եյին։ Սրանում եր կայանում հին բանակների հիմնական թուլությունների մեկը։ Մեր բանակն արմատական կերպով տարբերվում է գաղութային բանակներից։ Նրա ամբողջ եյությունը, նրա ամբողջ կառուցվածքը հիմնվում է մեր յերկրի ժողովուրդների միջև բարեկամական կապերի ամրապնդման վրա, ճնշված ժողովուրդների ազատագրման գաղափարի վրա, Խորհրդային Միության կազմի մեջ մտնող սոցիալիստական հանրապետությունների ազատության ու անկախության պաշտպանության գաղափարի վրա։

Սրանումն է մեր Կարմիր Բանակի ուժի ու հզորության յերկրորդ և հիմնական աղբյուրը։ Սրանումն է այն բանի գրավականը, որ կրիտիկական մոմենտում մեր բանակը կդառնի մեր անծայրածիր յերկրում բնակվող բոլոր ու ամեն տեսակի ազգությունների միլիոնավոր մասսաների մեջ մեծագույն աջակցություն։

Կուսակցության ցանկությունները, նրա խնդիրը կայանում է նրանում, որպեսզի այս առանձնահատկությունը ևս պահպանվի ու ամրապնդվի մեր Կարմիր Բանակի համար։

Վերջապես, Կարմիր Բանակի յերրորդ առանձնա-

հատկությունը։ Այդ առանձնահատկությունը կայանում է մեր ամբողջ Կարմիր Բանակը թափանցող ինտերնացիոնալիզմի վոգու մեջ, ինտերնացիոնալիզմի զգացմունքների մեջ։ Կապիտալիստական յերկրներում բանակները սովորաբար դաստիարակվում են ատելության վոգով դեպի մյուս ժողովուրդները, ատելության վոգով դեպի մյուս պետությունները, ատելության վոգով դեպի մյուս յերկրների բանվորներն ու գյուղացիները։ Ինչի՞ համար է արվում այս։ Նրա համար, վորպեսզի պետությունների միջև, տերությունների միջև, յերկրների միջև ռազմական ընդհարումներ ծագելու դեպքում բանակը վերածվի հլու-հնազանդ մի հոտի։ Սրանումն է կապիտալիստական բոլոր բանակների թուլության աղբյուրը։ Մեր Բանակը կառուցված է բոլորովին այլ հիմունքների վրա։ Մեր Կարմիր Բանակի ուժը, ընկերներ, կայանում է նրանում, վոր նա իր ծննդյան առաջին իսկ որից դաստիարակվում է ինտերնացիոնալիզմի վոգով, դեպի մյուս ժողովուրդները հարգանք տածելու վոգով, դեպի բոլոր յերկրների բանվորները սեր և հարգանք ունենալու վոգով, յերկրների միջև խաղաղություն պահպանելու ու հաստատելու վոգով։ Յեվ հենց այն պատճառով, վոր մեր բանակը դաստիարակվում է ինտերնացիոնալիզմի վոգով, բոլոր յերկրների բանվորների շահերի միասնության վոգով, հենց այդ պատճառով նա, մեր բանակը, հանդիսանում է վորպես համաշխարհային հեղափոխության բանակ, վորպես բոլոր յերկրների բանվորների բանակ։ Յեվ այն բանը, վոր այս հանգամանքն է հանդիսանում վորպես մեր

բանակի ուժի ու հզորության աղբյուր, այդ բանը յերբևիցե կիմանան բոլոր յերկրների բուրժուաները, յեթե նրանք սիրա կանեն հարձակվել մեր յերկրի վրա, վորովհետև նրանք այն ժամանակ կտեսնեն, վոր ինտերնացիոնալիզմի վոգով դաստիարակված մեր Կարմիր Բանակը անթիվ քանակությամբ բարեկամներ ու դաշնակիցներ ունի աշխարհի բոլոր մասերում, Շանհայից մինչև Նյու-Յորկ, Լոնդոնից մինչև Կալկուտտա։

Ահա, ընկերներ, այն յերրորդ հիմնական առանձնահատկությունը, վոր թափանցում է մեր բանակի հոգին և ստեղծում նրա ուժի ու հզորության աղբյուրը։

Կուսակցության ցանկությունները, նրա խնդիրը կայանում է նրանում, վոր այս առանձնահատկությունը ևս պահպանվի ու ամրապնդվի մեր բանակի համար։

Այս յերեք առանձնահատկություններին մեր բանակը պարտական է նրանով, վոր նա գիտե, թե ուր է գնում,—նրանով, վոր նա կազմված է վոչ թե անագե զինվորներից, այլ գիտակից մարդկանցից, վորոնք հասկանում են, թե ուր պետք է գնալ և հանուն ինչի մարտնչել։

Իսկ այն բանակը, վոր հասկանում է, թե ինքը հանուն ինչի յե մարտնչում, անպարտելի յե, ընկերներ։

Ահա թե ինչու մեր Կարմիր Բանակը աշխարհում ամենալավ բանակը լինելու բոլոր հիմքերն ունի։

Կեցցե՛ մեր Կարմիր Բանակը։

Կեցցե՛ն նրա մարտիկները։

Կեցցե՛ն նրա զեկավարները։

Կեցցե պրոլետարիատի դիկտատուրան, վոր Կարմիր Բանակ է ծնել, նրան հաղթանակ է տվել և նրան փառքով է պսակել։

(Բուռն, յերկարատեվ ծափահարություններ)։

Թարգմանիչ Ա. Տ.-Մկրտչյան
Խմբագիր Ռ. Ն. Դավթյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Հոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Դլավլիտի լիազոր № Կ—2480, հրատ. № 649,
Գտավեր № 30, տիրաժ 5000
Հանձնված է արտադրության 14/II 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 16/II 1939 թ.
Գինը 10 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության,
տպարան, Ցերևան, Ալլահվերդյան № 65

9

10

ՀՀ Ազգային գրադարան
NL0937819

21 ФЕВ. 1939 95

II
28587

ԳԻՆԸ 10 Կ.

И. СТАЛИН

О ТРЕХ ОСОБЕННОСТЯХ КРАСНОЙ АРМИИ

Госиздат—Издательство
полит. литературы
Ереван, 1939